



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարարի պարտականությունները կատարող

Արամ Մեյմարյան

«16» 04 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 050 - 26

Նախաձեռնող՝

«ՕՐԻԵՆԹ ՍԹՈՆ» ՍՊԸ
Երևան, Շենգավիթ, Շիրակի փ., 92/1,

Գործունեություն

Ոչ մեքաղական օգտակար հանաժողի արդյունահանում
Արարափի մարզ, Արարափ համայնք, Ավշար բնակավայր

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 050 - 26

«16» ապրիլ 2026թ.

Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ ՍԹՈՈՒՆ» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝ «ՕՐԻԵՆԹ ՍԹՈՆ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Ա կատեգորիա/

Գտնվելու վայրը՝ Արարատի մարզ, Արարատ համայնք, Ավշար բնակավայր

Ներածական մաս. Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «Մուլտի Գրուպ Սթոուն» տրավերտինների տեղամասը գտնվում է Արարատի մարզի Արարատ համայնքի Ավշար բնակավայրի վարչական տարածքում՝ մոտակա Վանաշեն բնակավայրից 1600 մ, Այգավանից 2000 մ հեռավորությունների վրա:

Հայցվող տարածքի հողերը ներկայացված են արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի թ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության նպատակն է իրականացնել տրավերտինների և կավերի արդյունահանում:

Տեղամասի օգտակար հանածոյի պաշարները հաստատվել են Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի օգտակար հանածոների պաշարների գործակալության խորհրդի կողմից 2003 թվականի օգոստոսի 18-ի N 17 որոշմամբ:

Հաշվարկված օգտակար հանածոյի ցուցանիշները համապատասխանում են GOCT 9479-98 «Բնական քարերից սղոցված երեսապատման սալեր» տեխնիկական պահանջներին, իսկ արտադրական թափոնները և տրավերտինների միջջերտային ապարները կարող են օգտագործվել որպես ցեմենտի հումք:



Նախագծվող բացահանքի վերջնական եզրագծի պարամետրերն են.

- բացահանքի առավելագույն երկարությունը՝ 275.0 մ,
- բացահանքի առավելագույն լայնությունը՝ 140.0 մ,
- մշակվող տրավերտինների հաստաշերտի միջին հզորությունը՝ 17.125 մ,
- բացահանքի առավելագույն խորությունը՝ 55 մ,
- տրավերտինների հաշվեկշռային պաշարները՝ 514240 մ³,
- տրավերտինների կորզվող պաշարները՝ 437104 մ³,
- ցեմենտի հումքի հաշվեկշռային պաշարները՝ 213760 մ³,
- ցեմենտի հումքի կորզվող պաշարները՝ 181696 մ³,
- բացահանքի օտարման մակերեսը կազմում է 3.0 հա,
- ծառայման ժամկետը ընդունվում է 20 տարի:

Հայցվող տեղամասը եզրագծվում է հետևյալ կոորդինատներով (կոորդինատները ARM-WGS84 (ARMREF 02) համակարգով են):

N	X	Y
1	4416919.0467	8474532.6771
2	4416909.65	8474672.11
3	4416655.03	8474657.76
4	4416650.82	8474586.73
5	4416646.299	8474568.4676

Հանքավայրի շահագործումը նախատեսվում է իրականացնել բաց եղանակով:

Հանքավայրում աշխատանքները սկսվելու են բացահանքի հյուսիս-արևելյան մասից:

Լեռնային աշխատանքները նախատեսվում է կատարել 5 մ բարձրությամբ հանքաստիճաններով, վերևից ներքև, մեխանիզացված եղանակով:

Արդյունահանված տրավերտինները նախատեսվում է իրացնել տեղում, սպառողի ավտոտրանսպորտով: Տեղամասի տարածքում արտադրական լցակույտեր չեն առաջանում:

Տեղամասում մակաբացման ապարները բացակայում են, իսկ բլոկների արդյունահանումից առաջացած տրավերտինների կտորները հանդիսանալու են ցեմենտի հումք:

Աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը կազմում է 20 մ:

Միաքարի առանձնացումը զանգվածից կատարվում է հետևյալ հերթականությամբ:

Հանքաստիճանի հատակից միաքարի հորիզոնական ուղղությամբ հատումները կատարվելու են «Korfman-N450» մակնիշի կտրիչաշղթայավոր քարհատ մեքենայի միջոցով: Հատման խորությունն ընդունվում է 2.0 մ: «Korfman-N450» մակնիշի քարհատ մեքենայի ժամային արտադրողականությունը կազմում է 5 մ²/ժամ, հերթափոխային արտադրողականությունը 8-ժամ:

Միաքարի ընդերկայնական և ընդլայնական ուղղություններով ուղղաձիգ հատումները կատարվելու են «LGR-3» մակնիշի ավաստաճոպանային քարհատ մեքենայի միջոցով: Ընդերկայնական ուղղությամբ հատվող շերտի երկարությունն ընդունված է 3.0 մ, իսկ ընդլայնական ուղղությամբ՝ 2.0 մ:

3x10x2.0 մ չափերի հատված պանելի շրջումը նախորոք մանր փշրանքից և ավազից պատրաստված բարձի վրա կատարվելու է «Korfman-KP-1150» մակնիշի օդային բարձերի համալիրով:



Միաքարի հեռացնելը (քարշ տալը) հանքախորշերից մինչև 10.0-15.0 մ հեռավորության վրա նախատեսվում է կատարել VOLVO EC-460B էքսկավատորի միջոցով:

Միաքարի մասնատումը մոտ 3x2x1.5 մ պայմանական չափերի բլոկների կատարվելու է «Korfman-KMSPT» մակնիշի ավմաստաճուպանային քարհատ մեքենայի միջոցով:

Ապրանքային բլոկների բարձումը ավտոինքնաթափի մեջ կատարվելու է 22 տ բեռնատարողությամբ MAZ-6303 ավտոկոունկի միջոցով:

Փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների ջրման նպատակով ջուրը նախատեսվում է բերել KAMAZ 53212 բեռնատար ջրատար մեքենայով:

Տեխնիկական նպատակներով ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել Վեդի համայնքի կոմունալ ծառայությունից՝ պայմանագրային հիմունքներով:

Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանների համաձայն՝ գետնաջրերը բացակայում են, հետևաբար, բացահանքում ջրահեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում: Անմիջապես քարհանքի տարածքը թափվող անձրևային ջրերը հեռացվելու են ինքնահոս կերպով և ներծծվում ճաքերի միջով:

Կենցաղային կեղտաջրերը օրական 0.18 մ³ ծավալով, նախատեսվում է լցնել բետոնային լցարան, որտեղից պարբերաբար տեղափոխել սահմանված կարգով:

Խմելու, կենցաղային նպատակներով անհրաժեշտ ջրի ծավալը մատակարարվելու է «Վեդիա Ջուր» ՓԲԸ կողմից, պայմանագրային հիմունքներով՝ նաև օգտագործելով ընկերության KAMAZ 53212 բեռնատար ջրատար մեքենան:

Օգտակար հանածոյի արդյունահանումից հետո խախտված տարածքներում կատարվելու է ռեկուլտիվացիա (շինարարական և անտառային ուղղություններով), որի արդյունքում ձևավորվելու է արևային կայանների տեղադրման համար համապատասխան տարածք, իսկ հանքավայրի պարագծով իրականացվելու է պաշտպանիչ ծառաշերտի տնկում և աճեցում:

Նախատեսվում է իրականացնել բացահանքի հատակի ռեկուլտիվացիա՝ մոտ 2.15 հա մակերեսի վրա: Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 4941.8 հազ. ՀՀ դրամ: Բացահանքի հատակի տարածությունը նախատեսվում է օգտագործել որպես արևային կայանի շինարարական հրապարակ:


Ծառաշերտի աճեցման համար կիրառվելու է կաթիլային ոռոգման ավտոմատացված հակարգ, տեղադրվելու են 5 մ³ տարողությամբ ջրի պահեստավորման չորս պլաստմասե բաք: Կանաչապատման համար նախատեսված է 580.0 հազ. ՀՀ դրամ:

Քանի որ հանքավայրի տարածքում առկա են գրունտային ճանապարհներ, ուստի մուտքային ավտոճանապարհների կառուցում չի նախատեսվում, սակայն նախատեսվում է առկա ճանապարհների լայնացում մինչև 8 մ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 1960.0 հազ. ՀՀ դրամ, բնապահպանական միջոցառումների համար ընդամենը 8746.8 հազ. ՀՀ դրամ:

Ըստ հաշվետվությունում եղած տեղեկատվության՝ հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, պատմության, բնության հուշարձաններ առկա չեն:

Տեղամասում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:



Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- լեռնային տեխնիկայի շարժիչների վառոցքները պետք է լինեն կարգավորված, ինչը կնվազեցնի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը,
- օդի դրական ջերմաստիճանի դեպքում պարբերաբար իրականացվելու է բացահանքի, արտադրական հրապարակի և մոտեցնող ճանապարհի ջրցան, բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,
- նավթամթերքները պահեստավորվելու են արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ կազմակերպված բետոնապատ հատակով պահեստ), որին տրվելու է համապատասխան թեքություն, որն ապահովելու է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը,
- սորուն նյութերը տեղափոխվելու են փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,
- Կարմիր գրքերում գրանցված տեսակների հայտնաբերման դեպքում իրականացվելու են ապրելավայրերի մշտադիտարկում, տեսակին բնորոշ առանձնյակների կամ բների հայտնաբերման դեպքում՝ առանձնացման, տեղափոխման, պահպանության և պաշտպանությանն ուղղված միջոցառումներ:

Աշխատանքների իրականացման ընթացքում ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամ,
- օտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով արդյունաբերական հրապարակի տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ,
- աղմուկի վերահսկողություն տարեկան մեկ անգամ,
- կենսաբազմազանության մշտադիտարկումներ՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակի, աճելավայրերի և ապրելավայրերի տարածքի, պոպուլյացիայի փոփոխության՝ տարեկան մեկ անգամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ ՍԹՈՈՒՆ» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային լսումներ Արարատի մարզի Արարատ համայնքի Ավշար բնակավայրում, որոնց ընթացքում մասնակիցները հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը:

Հանրային լսման ժամանակ հարց է բարձրացվել գործունեության իրականացման ընթացքում վտանգավոր թափոնների գործածության և հայցվող տարածքում Կարմիր գրքերում գրանցված տեսակների առկայության կամ բացակայության վերաբերյալ: «ՕՐԻԵՆԹ ՍԹՈՒՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչների կողմից պարզաբանվել է, որ թափոնների գործածությունն իրականացվելու է լիցենզավորված կազմակերպությունների կողմից, իսկ ինչ վերաբերում է Կարմիր գրքերում առկա բույսերին և կենդանիներին, ապա ընկերությունը ներկայացրել է հայցվող տարածքում կարմիր գրքերում գրանցված կենդանիների և բույսերի բացակայությունը հավաստող մասնագիտական



եզրակացություն՝ տրված «Բիո Գամա» ՍՊԸ-ի կողմից (գիտարշավն իրականացվել է 2025 թվականի մայիս-հունիս ամիսներին, ՀՀ ԳԱԱ մասնագետների կողմից):

Փորձաքննական գործընթացում «Հիդրոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ստացվել է կարծիք Արարատ քաղաքում փոշու սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի գերազանցման վերաբերյալ, ինչի համար նախատեսվել են հատուկ միջոցառումներ:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Արարատի մարզպետարանը, Արարատի համայնքապետարանը: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և բնապահպանական միջոցառումների իրականացման արդյունքում կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Աշխատանքների իրականացման ընթացքում պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները Կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

-Աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:

-Աշխատանքների իրականացման գործընթացում ներգրավել ազդակիր բնակավայրի բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:

-Հայցվող տարածքում բույսերի Կարմիր գրքում գրանցված՝ Կնճիթաթերթիկ սապատավոր (*Rhinopetalum gibbosum*), Օշան Թամամշյանի (*Salsola tamamschjanae* Iljin) բուսատեսակների, ինչպես նաև ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված՝ Արաքսյան չրխկան (*Cardiophorus araxicola*), Միջերկրածովային կրիա (*Testudo graeca*), Սեմյոնովի սևամարմին (*Cyphostethes semenovi*) կենդանատեսակների) հայտնաբերման դեպքում ընկերությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար, բացառելով տեսակների թվաքանակի կրճատումը և դրանց ապրելավայրերի վատթարացումը: Միջոցառումները պետք է համաձայնեցվեն լիազոր մարմնի հետ:

- Արդյունահանման աշխատանքների ընթացքում թափոնների գործածությունն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

- Կիրառել փոշենստեցման, այդ թվում՝ փոշեճնշիչ սարքավորումներ՝ համաձայն տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 9-ի «Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջները սահմանելու մասին» N15-Ն հրամանի:



ԵԶՐԱՓՈՒԿ ՄԱՍ

«ՕՐԻԵՆԹ ՍԹՈՆ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ ՍԹՈՒՆ» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Հեղինակ Մկրտչյան

Գոհար Մինասյան